ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտ, 2022 թվականի № 20-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի № 80-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի № 80-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի № 80-Լ որոշման № 2 հավելվածով հաստատված՝ 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ԹԵՎՈՍՅԱՆ

31 մարտ, 2022 թվականի

ք. Երևան